ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ « Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում»
Անցկացման վայրը՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց
Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության
Ուսուցիչ՝ Դուստրիկ Մուրադյան
Դպրոց՝ Վ. Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

ՄԱՐՏՈՒՆԻ 2022

Բովանդակություն

Ներածություն ……..……..…….. 3

Գլուխ I

1.1 Արժեքների սահմանումներ ու մեկնաբանություններ …..…… 6

1.2 Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ընդհանուր բնութագիրը ……..……8

1.3 Արժեքային համակարգն ու դրա կարևորությունը …… 11

Եզրակացություն ……

Ներածություն

Արժեքային կողմնորոշումները ծառայում են որպես շահերի, կարիքների, անձնական պահանջների, հասարակության մեջ դիրքի և հոգևոր զարգացման մակարդակի կողմնորոշման ընդհանուր ցուցիչ: Հասարակության զարգացման ուղին և հեռանկարները կախված են այսօր դեռահասների մոտ ձևավորված արժեքներից և սոցիալական հարաբերությունների նոր փոփոխություններին նրանց պատրաստվածության աստիճանից: Ահա թե ինչու դեռահաս բնակչության արժեքների ձևավորումը և արժեքների նկարագրի ընկալումը կարող է օգնել նրանց, ովքեր ծրագրում և իրականացնում են կրթական քաղաքականությունը, որպեսզի նրանք կարողանան ճիշտ որոշել ուսուցման և կրթության նպատակները և հաջողությամբ իրականացնել դրանք: Արժեքները հանդիսանում են տարբեր հասարակական գիտությունների ուսումնասիրության դրանց տեսական և գործնական կողմերի ուսումնասիրության, երևույթների մեկնաբանման և ըմբռնման գործիքակազմ, դրանք նաև հանդիսանում են կանխատեսման հնարավորության, որը բխում է դրանց մոտիվացիոն ներդրումից և հարաբերական կայունությունից (Pantic, 1995): Դրանք հնարավորություն են տալիս բացատրել և կանխատեսել անհատների վարքագիծը, պատկերացում կազմել նրանց արժեքային կողմնորոշումների մասին և նպաստել սոցիալականացման վրա ունեցած արժեքների ձևավորման մեխանիզմների և ազդեցությունների գիտակցումների ընդլայնմանը: Դեռահաս բնակչության մեջ արժեքների ձևավորումը և արժեքային նկարագրի ընկալումը կարող է օգնել նրանց, ովքեր ծրագրում և իրականացնում են կրթական քաղաքականությունը, որպեսզի նրանք կարողանան ճիշտ որոշել ուսուցման և կրթության նպատակները և

հաջողությամբ իրականացնել դրանք: Առանձին սերունդների արժեքային կողմնորոշումների տվյալները, որոնք հավաքվել են տարբեր ժամանակաշրջաններում, թույլ են տալիս եզրակացություններ անել կայունության, համապատասխանաբար երիտասարդների արժեքի պրոֆիլի փոփոխության վերաբերյալ, ինչպես նաև ընթացիկ սոցիալական հանգամանքների ազդեցության անհատական արժեքների որոշման վրա:

Մանկավարժական գիտության մեջ «Արժեհամակարգ» հասկացությունը բավականին լայն հասկացություն է: Լայնորեն ընդունվում է այն կարծիքը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն առաջնահերթ նախապայման է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Ու խոսելով արժեհամակարգի մասին կարևոր է նշել այն փաստը, որ արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Սա մեր պարգայում կարելի է համարել առաջնահերթ խնդիր, քանի որ ներկայիս համաշխարհային տենդենցները տանում են գլոբալիզացիային որը ինչ-որ չափով վտանգավոր է մեր պետության ու ինքնության համար: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ հասարակական, կրթական, ընտանեկան, սոցիալական ժողովրդագրական, ազգային, մշակույթային և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, բարձր արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ներկայիս դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Կարևոր է շեշտել որ պետք է դիտարկվի ու քննարկվի ոչ միայն ընդհանուր այլ նաև ազգային արժեքները: Նրա խնդիրներից մեկն էլ պետք է լինի մեր նախնիներից ժառանգած արժեքները և փոխանցել դրանք հետագա սերունդներին, քանի որ դրանց շնորհիվ ենք մենք պահպանում մեր անխառն ինքնատիպությունը համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Ուստի բնական է, որ արժեհամակարգերի թեման պարբերաբար պետք է ուսումնասիրվի ու թարմացվի այն միջոցները որոնք օգտագործվում են հասարակական ու անհատական արժեհամակարգերի զարգացման ու փոխանցման համար:

Մեր աշխատանքում մենք փորձելու ենք հանգամանորեն անդրադառնալ ու բացատրել թե ինչու է այդքան կարևոր արժեհամակարգի ձևավորումը և ինչ նշանակություն ունի այն դասավանդման համար:

ԳԼՈՒԽ I

1.1 Արժեքների սահմանումներ ու մեկնաբանություններ

Արժեքներն առավել լավ հասկանալու համար նախ պարզաբանենք, թե ինչպես են սահմանվում դրանք տարբեր բառարաններում: «Արժեք» բառն առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է արժանի լինել: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակութկյունն ու օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեռ մարդու առարկայական ու սոցիալական գործունեության մեջ:

Օքսֆորդի բառարանում «արժեք» բառը թարքմանաբար նշանակում է, որ ինչ-որ բան արժեք ունի կարևոր է կամ օգտակար: Արժեքները հանդես են գալիս որպես վարքի սկզբունքներ կամ ստանդարտներ, անձի դատողություն այն մասին թե ինչ է կարևոր այս կյանքում:

Հայերեն բառարանում «արժեք» բառը մեկնաբանվում է մի շարք հոմանիշներով, ինչպիսին են գին,գնահատանք: Այլ հայերեն բառարաններում ևս տրվում է «արժեք» հասկացության մեկնաբանությունը որպես ուշադրության արժանի հատկություն, նշվում է վերջինիս հասարակական օգտակարության մասին: Նրա գրեթե բոլոր մեկանաբանություններում նշվում է այս բառի կարևորության ու օգտակարության մասին:

Տարբեր պատմական ժամանակահատվածներ և տարբեր փիլիսոփայական դպրոցներ ունեն իրենց ավանդույթն արժեքների մեկնաբանման հարցում: Անտիկ, իսկ հետո նաև միջնադարյան փիլիսոփայության մեջ արժեքները նույնացվում էին կեցության հետ:Արժեքները դիտարկվում են հենց կեցության մեջ: Դեռևս անտիկ դարաշրջանում տարբեր պատկերացումներ կային

արժեքների բնույթի մասին: պլատոնի կարծիքով՝ բարձր արժեքները կրում են բացարձակ բնույթ, բայց սոֆիստների տեսանկյունից բոլոր արժեքները անհատական են և հարաբերական: Ըստ Արիստոտելի՝ մի կողմից առանձնացվում են ինքնաբավ արժեքներ, որոնց թվին են պատկանում մարդը, երջանկությունը, արդարությունը և այլն, և մյուս կողմից՝ նա նշում է մի շարք արժեքների հարաբերական բնույթի մասին: Արժեքների հիմնախնդիրը լայն նշանակությամբ առաջ է եկել մշակութային ավանդույթների արժեզրկման և հասարակության գաղափարական հիմքերի վարկաբեկման դարաշրջանում: Հունական ժողովրդավարության ճգնաժամը ստիպեց Սոկրատին առաջին անգամ առաջ քաշել հետևյալ հարցը.«Ի՞նչն է լավ»: Անտիկ փիլիսոփայության մեջ արժեքային բնութագրիչները մտնում էին իրականության, իրական կեցության հասկացությունների մեջ:

Փիլիսոփայության մեջ գոյություն ունի արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է աքսիոլոգիա «հունարեն axios-արժեք, logos-գիտություն»: Ակսիոլոգիան փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնույթի, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածքի մասին: Ակսիոլոգիան՝ որպես փիլիսոփայական հետազոտության ինքնուրույն ոլորտ, առաջ է եկել այն ժամանակ, երբ կեցություն հասկացությունը բաժանվում է երկու մասերի՝ իրականություն և արժեք: Ակսիոլոգիան ուսումնասիրում է խնդիրներ՝ կապված արժեքների բնույթի, ամբողջական արժեքային համակարգի, տարբեր արժեքների հարաբերակցությունների հետ:

Ամփոփելով տարբեր պատմական ժամանակահատվածներում արժեքների մեկնաբանման փիլիսոփայական հայեցակարգերը՝ պարզ է դառնում, որ տարբեր դարաշրջաններում արժեքները դիտարկվում էին որպես կեցության բաղադրիչ մաս, որպես սոցիալականացվող անձի համար կարևոր նորմատիվ չափանիշ, ինչը պայմանավորում է անհատի համոզմունքների և դիրքորոշումների ուղղվածությունը:

1.2 Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորուման ընդհանուր բնութագիրը

Մեր օրերում հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Բնականաբար դա չի կարող չազդել երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ երտասարդներն ու պատանիները հանդիսանում են այդ գործընթացների հիմնական մասնակիցներն, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրանց առջև դրված է բավական բարդ խնդիր այն է՝ փոխվել ժամանակի հետ ու կարողանալ համահունչ քայլել ժամանակակ պահանջներին համապատասխան, միևնույն ժամանակ զարգացնել տարբեր կարողությունները ու հմտություններ ու չդադարել ոչ մի վայրկյան ուսումնասիրել ու հետազոտել, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների առկայության պարագայում շատ դժվար է հասցնել իրացնել իրենց առաջադրված խնդիրները:

Ներկայումս կրթության կարևորագույն գործոններից է դարձել նպաստել հասարակության մեջ մարդու, անհատի դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, ինչպես նաև համապատասխան մարմինների ու հասարակության անդամների տեսակետների ու մոտեցումների փոփոխություն: Ինչպես հայտնի է բոլորիս Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը եղել է խորհրդային կրթական համակարգի ժառանգորդը և կազմավորվել էր նրա հենքի վրա: Այդ համակարգում ամեն ինչ միասնական բնույթ է ունեցել բացառություն չի եղել նաև արժեհամակարգը: Ուսուցիչներց պահանջվել է միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Սակայն անկախության հաստատումից հետո ամեն ինչ այլ ընթացք է ստացել: Բնական է որ նոր պետությանը հարկավոր էր նաև նորաստեղծ կրթական համակարգ:

Ժամանակաշրջանի փոփոխությունը իր հետ բերեց նաև արժեքներ, արժեքային կողմնորոշումների, նախասիրությունների ու պահանջմունքների փոփոխություն: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր

խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Նորանկախ հանրապետության նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն:

Կարևոր էր հասկանալ թե ինչպիսի արժեքային համակարգ է մեզ պետք, ինչպիսի սերունդ ու ինչպիսի քաղաքացի ենք մենք ուզում տեսնել:

Այստեղ ունենք մի կարևոր հարց ինչպե՞ս են առաջանում արժեքները ու եթե այդքան հեշտ է նոր արժեքների ստեղծումն ու փոխանցումը ինչի՞ համար է անհրաժեշտ դպրոցում արժեքների փոխանցման մասին խոսելը:

Իր ողջ կյանքի ընթացքում մարդը ձգտում է առանձնացնել առաջնայինը և երկրորդականը կարևորը և ոչ կարևորը: Այն ինչը մենք համարում ենք կարևոր և ճիշտ ազդեցություն է գործում մեր որոշումների վարքի ու շրջապատի հետ փոհարաբերությունների վրա: Աստիճանաբար,այդ հասկացությունները դառնում են արժեքների ձևավորման հիմք, ամրագրվում անձի կենսական փորձով և ու ղորդում են նրա գործունեությունը: Արժեքային կողմնորոշումների ամբողջությունը,նպաստում է վարքի կայուն դրսևորումներին ինչը արտահայտվում է անձի համապատասխան պահանջմունքների ու հետաքրքրությունների ուղղվածության մեջ: Անհատական արժեքների ձևավորման անձի սոցիալականացման ընթացքում նրանց ամբողջացման և համակարգման հարցադրումները մշտապես եղել են գիտնականների ուշադրության կենտրոնում չէ որ անհատական արժեքների ձևավորումը կարելի է դիտել որպես սոցիալական արժեքների յուրացման մի ուրույն գործընթաց: Ռուսական գիտական ասպարեզում հետաքրքրությունը արժեհամակարգի և մասնավորապես արժեքների նկատմամբ ի հայտ 20-եկավ րդ դարի կեսերին, երբ հրատարակվեց Վ. Տուգարինովի աշխատությունը կյանքի և մշակույթի արժեքների վերաբերյալ: Աստիճանաբար ձևավորվեցին Վ Վասիլենկոյի .և Վ Տուգարինովի տեսակետները: Առաջին տեսակետի

համաձայն, արժեքները որոշվում են իրականության օբյեկտների նշանակալիության ու օգտակարության նկատառումներով: Երկրորդ տեսակետը շեշտում էր հակառակն արժեքների որպես հասարակական իդեալներ ներկայանալու հանգամանքը, իսկ երրորդ տեսակետի հետևորդները ջանում էին համակցել այդ երկու բևեռային դիրքորոշումները:

Ներկայիս ռուսական գիտական միտքը հակվում է արժեքներիի արևմտյան հումանիստական մոտեցումներին և դիտում այն անձի սոցիալ հոգեբանական դրսևորումների համատեքստում: Այսպես Ա. Լեոնտևը և Ս. Ռուբինշտեյնը քննում են անձը գործունեության ընթացքում Վ. Մյասիշչևը կարևորում է անձի հոգեբանական հարաբերությունները իսկ Դ. Ուզնադզեն շեշտում է անձի դիրքորշումների կարևորությունը : Այդուհանդերձ անձնային բնութագիրների մեջ կարելի է նշմարել արժեքների յուրահատուկ դրսևորումը Բ. Անանևը այն ներկայացնում է որպես կենսական ուղղվածություն Ա. Լեոնտևը արժեքները դիտում է, որպես անձի գործունեությունը իմաստավորող տարր, իսկ Լ. Վիգոտսկին՝ սահմանելով «զարգացման սոցիալական իրավիճակ», հասկացությունը, շեշտադրեց սոցիալական միջավայրում անձի կայացման հանգամանքը: Բ. Անանևի կարծիքով անձի սոցիալական դերերի և արժեքային կողմնորոշումների համակարգերը ձևավորվում են՝ հիմնվելով գերազանցապես անձի սոցիալական կարգավիճակի վրա: Նրա համոզմամբ սոցիալական կարգավիճակը դերերը և արժեքային կողմնորոշումները որոշում են վարքի առանձնահատկությունները և դրդապատճառները ու միաժամանակ անձի հակումներն ու բնավորությունը: Նշենք նաև Վ. Ալեկսեևայի կարծիքը նրա մասին, որ հասարակության արժեքները՝ ընդգրկվելով անձի գործունեության և վարքի համակարգի մեջ, ձեռք են բերում անձնային բնութագիրներ:

Այսպես արժեքների ձևավորման արժեհամակարգի հստակեցման ամբողջ գործընթացը դիտվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացների հետ միասին կազմելով նրա անբաժանելի մասը և պայմանավորում անձի վարքը:

Արժեքները թույլ են տալիս անձին գնահատել շրջակա աշխարհը արժեքների միջոցով իրականության առարկաներն ու երևույթները բնութագրվում են հասարակական նշանակություններով: Ուստի նրանք ներկայանում են անձի բարոյահոգեբանական նկարագրի միջոցով ցուցադրում են թե որքանով է անձը

կարևորում որոշակի գաղափարներն ու նպատակները: Անձի արժեքները հիմնականում ձևավորվում են մանուկ հասակից: Ճիշտ վարվելու մասին պատկերացումներն ու խոսելու հմտությունները հաճախ հստակեցվում են ծնողների ընտանիքի այլ անդամների ազդեցության ներքո: Զարգացման հետ զուգընթաց երեխայի արժեքային համակարգի ձևավորման վրա իրենց ազդեցություն են թողնում ընկերները, ուսուցիչները և այլոք. ընդլայնվում է արժեքների յուրացման ու ձևավորման շրջանակը երեխան սկսում է ընտրողաբար կառուցել սեփական արժեքային համակարգը և համադրել այն հասարակական արժեհամակարգի հետ: Սա դառնում է այն հիմնախնդիրներից մեկը, որը պետք է ամրապնդի դպրոց-ծնող կապը:

1.3 Արժեքային համակարգն ու դրա կարևորությունը

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:

- Ունենա ազգային ինքնագիտակցություն:
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:[1]

[1] Բաբանսկի, Յուրի,Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում, էջ 112

Ամեն անգամ երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և հնարավոր է, որ այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: եվ եթե նույնիսկ փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասվածը միևնույն է ինչ որ կետեր բացակա են թվալու ու ինչ որ բաներ մենք թերի ենք համարելու:

Այնուամենայնիվ փորձելով ձևակերպել թե ինչ է արժեքը կարող ենք ասել որ այն երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Անիմաստ է մտածել որ արժեքը կարող է հեշտությամբ ձեռք բերվել կամ որն աքյն ինքնին պարզ երևույթ է, չէ որ այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլեւ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:[2]

Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց

համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ

[2] https://mediamax.am

թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:

Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար,

կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Ահա նմանատիպ կարևորություն կարող է ունենալ իրական ու ճիշտ արժեհամակարգերի ստեղծումը: Մենք երբեմն թերագնահատում ենք ու կարևորություն չենք տալիս այն կարևոր հանգամանքին որ դասավանդման գործընթացի ժամանակ մենք գործ ենք ունենում տարբեր հոգեբանական ու բարոյական վիճակում գտնվող երեխաների հետ, ովքեր կարիք ունեն ճիշտ ուղորդման ու ճիշտ արժեքների ստեղծման: Սա այն գրավականն է ինչը կարող է մեզ օգնել հասնել այն կետին, որ մենք ունակ կլինենք դաստիրակել սերունդ, որը որ միայն կայացած է ու հասկանում է թե ինչի կարիք ունի այլ իրոք որպես այդպիսի կայացած անհատ է պատրաստ ապրելու ու պաշտպանելքւ այն արժեհամակարգերը որի կրողն է հանդիսանում ինքը: Սա նաև մեզ կոգնի վստահ լինել որ կյանքի որ փուլում էլ նրա ունեցած արժեքներն ու մտքերը, որոնք ոչ միայն վերաբերվում են հասարակական նորմերին վատ թե լավ , այլ նաև հայրենիքին նրա ունեցած գիտելիքներին հիման վրա ու իր համոզմունքների ու գիտակցման շնորհիվ նա կարող է պաշտպանել իր ունեցած արժեքներն ու ստեղծել նորերը որոնք ոչ միայն չեն խանգարում ու չեն հակասում մեր ազգային նպատակներին ու արժեքներին այլ նաև համապատասխան են ժամանակակից տենդեցներին ու պահանջներին:

Եզրակացություն

Հետազոտելով այս թեման ուսումնասիրելով այն տարբեր տեսանկյուններից մենք եկանք հետևյալ եզրահանգումներին.

- Արժեքային համակարգերի մասին սկսել են խոսել հնագույն ժամանակներից, դրան անդրադարձել են տարբեր փիլիսոփաներ: Սրա հետևանքով հետագայում փիլիսոփայության մեջ առաջացել է արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է աքսիոլոգիա «հունարեն axios-արժեք, logos-գիտություն»:

- Ապրելով մի դարաշրջանում, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաները մարդկանց կյանքի, նրանց կրթության, աշխատանքի ու առօրյայի անբաժանելի մաս են դարձել դժվարացել է ճիշտ տարբերակել ու համապատասխան արժեքային համակարգերով դաստիրակել նոր սերնդին:

- Նոր սերնդին համապատասխան արժեքային համակարգով դաստիրակելը շատ կարևոր է որպեսզի նրանք կարողանան հասարակության լիիրավ անդամ դառնալ,ինչպես նաև հնարավոր լինի նրանց ներգրավվել հասարակական կյանքին ու գործունեությանը:

- Արժեքների ձևավորման արժեհամակարգի հստակեցման ամբողջ գործընթացը դիտվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացների հետ միասին և կազմում նրա անբաժանելի մասը պայմանավորելով անձի վարքը:

- Արժեքները թույլ են տալիս անձին գնահատել շրջակա աշխարհը արժեքների միջոցով իրականության առարկաներն ու երևույթները բնութագրվում են հասարակական նշանակություններով:

- Արժեքային համակարգի ձևավորման համար կարևոր են ազգային գիտակցության,ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտության, արդարության, պատասխանատվության զգացումները, ինչպես նաև սեփական կյանքում առաջնային նպատակների ու սկզբունքների առկայությունը:

- Գիտակցումը որ արժեհամակարգերը մեր կյանքի ամենակարևոր բաղադրիչներից մեկն են քանի որ դրանց միջոցով է իմաստավորվում մեր կյանքը:

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի

տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

Գրականության ցանկ

1. **Բառագիրք հայերեն լեզուի Անդրանիկ Վրդ. Կռանեան, Պէյրութ,1998,**
2. **Մալխասեանց,Ս. Հայերեն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ պետական Հրատարակչություն,Երևան, 1994**
3. **Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:**

4. **Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:**
5. **Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում :**
6. **Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:**

7. https://mediamax.am/am/column/12925/
8. **file:///C:/Users/Lili-comp%20Martuni/Downloads/Dialnet-TheRoleOfEducationInTheFormationOfValuesAndValueOr-4909382.pdf**
9. https://wp-hy.wikideck.com/%D4%B1%D5%B6%D5%BF%D5%B8%D5%B6%20%D5%84%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A5%D5%B6%D5%AF%D5%B8
10. **http://ysu.am/files/haj%20derahasi%20arjehamakargi%20poxakerpumnery.pdf**